բողջ երկարութեամբ ձգած էր կարմիր մահուդ, նեղ անցքի երկու կողմով շարուած էին հայ աշակերտուհիք, Բէալական դպրոցի հայ աշակերտներն և մեր եկեղեցական երկսեռ դպրոցների ուսանողները։

Վեհափառ Տէրը շուրջառը վրան առնելով՝ շրջապատուած հոգեւորական դասից գնացքը ուղղեց դէպի եկեղեցին՝ յատուկ պատրաստած ամպ - հովանոյ ներքեւ, որը տանում էին Միրզայեան, Ադամեան, Դիլդարեան և Շագիդանեան պարոնները՝ փոփոխակի և ուրիշները։ Այսպէս «Հրաշափառ Աստուած» հրաշալի շարականի երգեցողութեամբ ծանրաքայլ գնալով Վեհափառը և օրհնելով ժողովրդին՝ հասաւ սուրբ Լուսաւորիչ անունով եկեղեցին, ուր կարդացուեցին սահմանեալ աղօթքներն։ Մաղթանքից յետոյ Նորին Վեհափառութիւնն օրհնեց ժողովրդին և ուղեկցութեամբ հոգեւորական դասի՝ գնաց մինչեւ պ. Գէորգ Լալայեանի տունը, ուր յատուկ Վեհափառի համար կահաւորուած էր վերին աստիճանի շքեղ զարդերով։ Վեհափառը «Պահպանիչ»ով արձակեց ժողովրդին, այս տեղ Նորից օդը թնդաց ծերերի և մանուկների և համայն ժողովրդեան «կեցցէ Վեհափառը» աղաղակներից։

Այս տեղ ներկայացան Նորին Վեհափառութեան նահանգապետը, ժանդարմների գլխաւորը, թուրքերի մուֆթին, տաճկաց և պարսից հիւպատոսներն և շատ ուրիշները. Վեհափառը ամենի հետ էլ հանդիսաւոր և պատշաճաւոր խօսակցութիւն ունեցաւ։

Երեկոյեան եկեղեցւոյ շուրջը վառած գոյնզգոյն լապտերների շղթայն դրօշակների հետ, կարծես, արտաքինով արտայայտում էին եկեղեցւոյ ներքին ուրախութիւնը, որ զգում էր իւր Մեծ Հիմնադրի փոխանորդի ներկայութեամբ։

Միւս օրը հանդիսաւոր պատարագ էր. պատարագիչն էր Կարապետ եպիսկոպոսը։ Ամբոխը եկեղեցում այնպէս էր խռնուած, որ անհնարին էր շարժուել։ Փողոցն և եկեղեցու բակը կատարելապէս տօնավաճառի հրապարակ էին դարձել։ Օրը կիւրակէ էր. այդ օրը պէտք է Բագուի երկսեռ դպրոցների համար կառուցանելի մեծ շինութեան հիմքը դնուէր. ամբոխի ծայրը վերջանում էր այս տեղ։ Ժամանակաւոր գմբէթը փայլում էր այս տեղ և գունաւոր դրօշակները ծածանում էին. զարմանալի անոյշ եղանակը